

myrzhik

myrzhik

myrzhik

891.41
9-94

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԱՀԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿՆ

Վ. Մ. ԴՈՒՆԿԻՆ



ՊԻԿՈՎԱՅԱ ԴԱՄԱ

891.71

7-97

Հրատարակչություն 1937 ՅԵՐԵՎԱՆ

[illegible]

7-37

wp

ՊԻԿՈՎԱՅԱԴԱՄԱ

(ԱԳՌԱՎ—ԱՂԶԻԿ)

Թարգ. Ս. Ս ն լ է ի ա ս յ ա Ն

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՆԱԴ ՄԵՍԿՈՒԻՐ

Ἰωάννης ὁ ἐκ τῆς ἑκκλησίας τοῦ Θεοῦ

[illegible]

7682 P. 11. 8

1937

HAYK 1934 6 24



167-49

Պիկովայա դամա¹ նշանակում է
զաղտնի անբարյացակամություն:
Նորագույն գուշակողական գիրք

I

Իսկ վատ յեղանակին
Նրանք հավաքվում էին
Հաճախ.
Ծալում էին² —աստված նրանց ասքր,—
Հիսուսից
Մինչև հարյուր,
Յեվ տարվում էին,
Յեվ դուրս գրում:
Կավիճով:
Այսպես՝ վատ յեղանակին
Նրանք գրադվում էին
Գործով:

Մի անգամ թուղթ էին խաղում հեծելազորի գվարդիական
Նարումովի տանը: Ձմեռային յերկար գիշերն անցավ աննկատե-
լի: Ընթրիքի նստեցին առավոտյան ժամի հինգին: Նրանք, ով-
քեր տարել էին՝ մեծ ախորժակով էին ուտում: մյուսները
մտացրիվ նստած էին իրենց զատարկ սպասքի առջև: Սակայն՝
յերեսաց Շամպանի գինին, խոսակցությունն աշխուժացավ և բո-
լորը մասնակցեցին դրան:

— Ի՞նչ արիր, Սուրին, — հարցրեց տանտերը:

¹ Пиковая дама — (խաղաթղթի նիշ) — «սևի աղջիկը», «տեղ-աղջիկ»,
«ազոս-աղջիկ»:

² «Ծալում եյին» — այն ժամանակվա թղթախաղերի միջոցին, յերբ մեկը
վորոշ գումար եր դնում այս կամ այն թղթի վրա, անմիջապես ծալում եյին
այդ թղթի մի անկյունը՝ ըստ գրված գումարի: Պուշկինյան եզրխայում
թղթախաղը լայն տարածում եր գտել ազնվական հասարակության մեջ:
Բունդ խաղամոլ եր և ինքը գրողը:

— Տանուլ տվի, սովորականի պես: Պետք է խոստովանել, վոր յես անբախտ եմ. խաղում եմ միբանդով՝ յեղանակով, յերբեք չեմ տաքանում, վոչնչով ուշքս չես գրավի, բայց թե միշտ ել տանուլ եմ տալիս:

— Յեզվ դու վոչ մի անգամ չգայթակղվեցիր, վոչ մի անգամ չդրիր ուռքով՝ վրա... Դու հաստատակամությունը զարմացնում ե ինձ:

— Հապա Հերմանը, —ասաց հյուրերից մեկը, ցույց տալով յերկտասարդ ինժեներին, —ծնված որից ձեռը թուղթ չի վերցրել, իր որում մի պարոլի³ չի ծալել, սակայն մինչև ժամի հինգը նստած ե մեզ հետ և մտիկ ե տալիս մեր խաղին:

— Խաղը սաստիկ հետաքրքրում ե ինձ, —ասաց Հերմանը, —բայց յես ի վիճակի չեմ անհրաժեշտ միջոցներս զոհարերել այն հույսով, թե ավելորդը ձեռք կբերեմ:

— Հերմանը գերմանացի յե, նա գիտե իր հաշիվը, ա՛յ թե ինչումն ե բանը, —նկատեց Տոմսկին: —Իսկ յեթե կա մեկը, վորը անհասկանալի յե ինձ համար, դա իմ տատիկն ե՝ կոմսուհի Աննա Ֆեդոտովնան:

— Ինչպե՞ս, ի՞նչ—ձայնեցին հյուրերը:

— Չեմ կարողանում հասկանալ, —չարունակեց Տոմսկին, —թե ի՞նչպես ե, վոր իմ տատիկը չի խաղում⁴:

— Ի՞նչ մի գտնմանալի բան ե, —ասաց Նարումովը, —վոր ութսունամյա պառավը թուղթ չի խաղում:

— Ուրեմն դուք վոչինչ չգիտե՞ք նրա մասին:

— Վոչինչ, իսկպես վոչինչ...

— Ո՛ր, ուրեմն լսեցեք: Պետք է իմանալ, վոր իմ տատիկը վաթսուն տարի առաջ գնացել եր Փարիզ և այնտեղ մեծ հաջողություններ ունեցել: Ժողովուրդը վաղել և նրա յետեից՝

¹ Չավելացնելով սկզբնական խաղադրամարը:

² Խաղի ժամանակ այնպիսի մի գրություն, յերբ խաղացողը մի քանի թուղթ միմյանց հետեից ե տանում:

³ Պարոլի ծալել—կրկնապատկել սկզբում գրված խաղադրամարը:

⁴ Բնադրում *понтитровать* բառն ե, վոր նշանակում ե «բանկ» կամ «չտոտ» գնալ «բանկ» պահողի դեմ՝ նա ով վորոչ գումար ե դնում և բաժանում ե թղթերը. *понтитровать* կարելի յե կամ ամբողջ գումարը, վոր դրված ե բանկում, կամ նրա մի մասը:

*Vénus moscovite*¹ տեսնելու համար. Ռիչելեն² քարչ ե յեկել նրա յետեից և տատիկս հավատացնում ե, վոր քիչ ե մնացել, թե նա անձնասպանություն գործի—իր խոստարտությունից: Այն ժամանակ տիկիները խաղալիս են յեղել փարավոն³: Մի անգամ պալատում նա տանուլ ե տալիս Ուրլանի դուքսին⁴ մի ինչ վոր խոշոր գումար: Տուն վերադառնալով տատիկս իր դեմքի վրայից հանելով արհեստական խալերը և քանդելով Փիժմաները⁵, պապիս հայտնում ե իր տանուլ տալու մասին և հրամայում ե վճարել: Հանգուցյալ պապս, վորքան հիշում եմ, տատիկիս ծառայապետի պես մի մարդ եր, սաստիկ վախենում եր նրանից, սակայն լսելով տանուլ տված մի այդպիսի սոսկալի դումարի մասին, բարկանում ե, հաշիվներ մեջ բերում, ապացուցում նրան, վոր կես տարվա ընթացքում ծախսել են կես միլիոն, վոր Փարիզի մոտերը նրանք չունեն վոչ մերձ-մոսկովյան կալված, վոչ ել սարատովյան⁶ դյուղ և կտրականապես հրաժարվում ե վճարումից: Տատիկս նրան մի ապտակ ե հասցնում և ի նշան իր անողորմածության՝ մենակ ե պառկում քնելու: Մյուս որը նա հրամայում ե իր մոտ կանչել ամուսնուն, հուսալով, վոր տնային պատիժը ազդած կլինի, սակայն նրան տեսնում ե անդրդվելի: Իր կյանքում առաջին անգամ տատիկս նստում, դատումներ ե անում ամուսնու հետ և բացատրություններ տալիս. կարծում ե, թե կամաչեցնե նրան, ներողամտաբար ապացուցելով, վոր ամեն պարտք միատեսակ չի լինում և վոր տարբերություն կա իշխանի և կառնթադործի միջև: —Ո՞ւմ ես խոսք հասկացնում. պապս բռնտ ե անում: Չե ու չե: Տատիկս չի իմանում ինչ անի: Նրա հետ մոտ ծանոթ ե լինում մի նշանա-

¹ Մոսկովյան վենետիցյան (վենետիկացիների և զեղեցիկության արտվածուհիներ):

² Դուքս Ռիչելեն, Արման Դյուպլեսսի—այն ժամանակվա ամենահայտնի կնամոլներից մեկը:

³ Փարավոն—այն տարածված աղարտ խաղ, վորին կարող եյին մասնակցել անուհիները թվով խաղացողներ:

⁴ Ուրլանի դուքսը—Բուրբոնների՝ Ֆրանսիական Թագավորական տան կրտսեր հյուղը:

⁵ Փիժմաներ—կեսոտիկից շինած ուռուցիկ հարմարեցում, վորի վրայից հաղնում եյին հին ձևի կանացի վերնազգեստ:

⁶ Խոսքը կալվածատիրական դյուղերի մասին ե:

վոր մարդ: Դուք լսել եք կոմս Սեն-ժերմենի¹ մասին, վորի անկան չուրջն այնքան սքանչելի բաներ են պատմում: Դուք գիտեք, վոր նա իրեն ցույց եր տալիս վորպես հավիտենական ջհուգ², վորպես կենսահալոթի³ և փրկստիպական քարի⁴ գյուտարար և այլն: Նրան ծաղրում եյին վորպես չառախանի, իսկ Կաղանովան⁵ իր հուշերի մեջ ասում է, վոր նա լրտես եր. այնուամենայնիվ, Սեն-ժերմենը, չնայած իր խորհրդավորությանը, շատ հարգելի արտաքին ունեւր և հասարակության մեջ շատ սիրալիր մարդ եր: Տառս մինչև հիմա ել անչափ սիրում է նրան և բարկանում է, յերբ հարգանքով չեն խոսում նրա մասին: Տառս գիտեր, վոր նա կարող եր ունենալ մեծ գումարներ: Նա վորոշում է գիմել նրա ողնությանը: Գրում է նրան մի յերկտող և խնդրում՝ անհապաղ իր մոտ գալ: Ծեր խենթավունը իսկույն հայտնում է և տատիս տեսնում սարսափելի վշտի մեջ: Ամենասե գույներով նա նկարագրում է ամուսնու բարբարոսությունը և, ի վերջո, ասում, վոր իր բոլոր հույսը դնում է նրա բարեկամության և սիրալիրության վրա: Սեն-ժերմենը փոքր ինչ միտք է անում:—«Յես կարող եմ ձեզ ծառայություն մատուցել՝ այդ գումարով, — ասում է նա, — սակայն գիտեմ, վոր դուք հանդիստ չեք լինի, մինչև վոր չհատուցեք ինձ, մինչդեռ յես չեյի կամենա ձեզ նոր հոգսերի մեջ ձգել: Կա մի այլ միջոց. դո՛ւք կարող եք յես բերել ձեր տանուլ տվածը»:—«Բայց, սիրելի կոմս, — պատասխանում է տատիկս, — յես ասացի ձեզ, վոր մենք դրամ չունենք բնով»:— «Այստեղ դրամի կարիք չկա, — առարկում է Սեն-ժերմենը, — հաճեցեք լսել ինձ»: Այս ասելով

¹ Սեն-ժերմեն (մահացած մոտ 1795 թ.) — XVIII դարի ամենամեծ փրկական արկածախնդիրներից մեկը:

² «Հավիտենական հրեան» — քառ հրեական միջնադարյան լեգենդի վերաբերյալ և հասցրել Գրիտուսին և այդ հանցանքի համար դատապարտված և հավիտյան թափառել յերկրի վրա:

³ Կենաց ելևելիք — միջնադարյան արքիթիոսների պատրաստած խորհրդավոր մի նշույթ, վորը իրեն թե քուրիչ մի դեղ է յեղել բոլոր հիվանդություններից և՛ մշտական յերիասարգության աղբյուր:

⁴ Փրկստիպական քար — յուլի, վորի ողնությամբ միջնադարյան արքիթիոսների ասելով կարելի յեր հասարակ մեռացները դարձնել վոսկի:

⁵ Կաղանովան (1725—1798) — վենետիկցի հայտնի արկածախնդիր, վորը իր հուշերի մեջ տվել է աշխարհիկ հասարակության նեխման գունեղ նկարագրությունը Փրանսիական բուրժուական հեղափոխության նախորդակին:

նա մի զաղտնիք է բացում տատիս, զաղտնիք, վորի համար մեղնից յուրաքանչյուրը շատ թանկ կվճարեր...

Յերիասարգ խաղացողները կրկնապատկեցին իրենց ուշադրությունը: Տոմսիկն վառեց իր ծխամորճը, ծուխը ներս քաշեց և շարունակեց:

— Հենց նույն յերեկոյան տառս հայտնում է վերստում¹ au jeu de la Reine²: Թուղթ բաժանողը³ Որլյանի դուքսն է լինում. տառս թեթևակի ներողություն է խնդրում, վոր չի բերել իր պարտքը և վորպես արդարացում մի փոքրիկ պատմություն է հորինում ու սկսում է նրա դեմ խաղալ: Նա բնորոշ է յերեք թուղթ և մեկը մյուսի հետեից դնում. բոլոր յերեքն ել նրա համար շահում են սոնիկ⁴ և տառս հետ է բերում տանուլ տվածը:

— Պատահմո՛ւնք, — ասաց հյուրերից մեկը:

— Հեքյաթ է, — նկատեց Հերմանը:

— Կարելի յե, թե փոչեծածկ⁵ թղթե՞ր են յեղել, — վրա բերեց յերբորդը:

— Ձեմ կարծում, — հանդիսավոր կերպով պատասխանեց Տոմսիկն:

— Ի՞նչպես, — ասաց Նարոմովը, — դու տառ ունես, վորը յերեք թուղթ իրար յետեից է նախադուշակում, և դու մինչև հիմա նրանից չե՞ս սովորել նրա կարալիստիկան⁶:

— Բաս, ի՞նչպես չե, — պատասխանեց Տոմսիկն, — նա չորս վորդիներ ունեւր, այդ թվում և իմ հայրը. բոլոր չորսն ել թունդ խաղամոլներ եյին և նրանցից վոչ մեկին նա չբացեց իր զաղտնիքը, թեև դա վատ չեր լինի նրանց և մինչև իսկ ինձ հա-

¹ վերստ — թաղավորական հայտնի պալատ Փարիզի մոտ, ուր զահա-կալություն են ունեցել Փրանսիական թաղավորները սկսած Լյուդովիկոս XIV-ի ժամանակից:

² Թաղուհու մոտ թղթախաղի:

³ Այսինքն՝ բանիկ պահողը:

⁴ Սոնիկ տանել — առաջին խի թղթով շահել բանկում դրված բոլոր գումարը:

⁵ Կեղծ թղթեր. հեշտ սրբվող հատուկ փոշիով խաղաթղթի յերեսը ծածկում են մի կամ մի քանի նշաններ, վոր հնարավորություն է թալիս պահանջվող թուղթը ցույց տալ:

⁶ Գաղտնի գիտելիքներ, վորոնցով իրը թե ողտվել են միջնադարյան արքիթիոսները:

մար: Բայց ահա թե ի՞նչ պատմեց հորեղբայրս՝ կոմս Իվան Իլ-
յիչը և այդ բանն ինձ համարացնելիս նա իր պատվով եր յերդ-
վում: Հանդուցյալ Չապլիցկին, հենց նա, վոր չքավորութեան
մեջ մեռավ միլիոններ վատնելուց հետո, մի անգամ իր յերիտա-
սարդութեան ժամանակ տարվում է — հիշում եմ՝ Չորիչին՝ —
մոտ յերեք հարյուր հազար: Նա հուսահատութեան մեջ է ընկ-
նում: Տառա, վոր միշտ խիստ եր վերաբերվում յերիտասարդ-
ների չարածճիւղութիւններին, ինչպես է լինում՝ խղճում է Չապ-
լիցկուն: Տալիս է նրան յերեք թուղթ այն պայմանով, վոր նա
գրանք մեկը մյուսի յետեւից դնի և նրանից ազնիվ խոսք եր արել
այլևս յերեք թուղթ չխաղալ: Չապլիցկին ներկայանում է իրեն
հաղթողին. նստում են խաղալու: Չապլիցկին առաջին թղթի
համար դնում է հիսուն հազար ուրբի և սոնիկ տանում. պա-
րոյի, պարոյի-պե՞ և ծալում — յետ բերում տանուլ տվածը և
դեռ մի բան ել ավելի: Սակայն՝ ժամանակ է քնելու. արդեն
վեցից պակաս է քառորդ:

Իրոք, արդեն լուսանում եր, յերիտասարդները դատարկե-
ցին գավաթները և մեկնեցին իրենց տները:

II

— Il paraît que monsieur est de cide'ment pour les
suivantes.

— Que voulez-vous, madame? Elles sont plus
fraîches³.

Աշխարհիկ խոսակցութիւն.

Պառավ կոմսուհի ***-ը նստած եր իր զգեցարանում հայե-
լու առջև: Յերեք աղջիկներ շրջապատել էին նրան: Մեկը բռ-

¹ Մ. Գ. Չորիչ — սերբ գրողացի, վոր XVIII դ. կեսերին Ռուսաստան եր
յեկել: Պոետիկինի աղյուստանն (համհարդ) եր, հետագայում դարձավ դե-
ներալ: Յեկատերինա II-ի բաղմամբով սերեկաններից մեկն եր և նրանից մե-
ծամեծ պարզեմտութիւններ եր ստացել:

² Պարոյի-պե ծալել — խաղաղումարը քառապատկել՝ սկզբնականի համե-
մատութեամբ:

³ Ըստ յերեւոյթին դուր վճռահանապես գերադասում եր աղախիներին:

— Ի՞նչ կհրամայեք, տիբուհի: Նրանք ավելի թարմ են:

Նեւ եր կարմրաշաւարի անոթը, մյուսը՝ հերկալներով լի տուփը,
յերբորդը՝ բարձրադիր մի չեպեց¹ հրագուն ժապավեններով:
Կոմսուհին մաղաչաւ անգամ պահանջկոտութիւն չուներ դեպի
վաղուց թառամած գեղեցկութիւնը, սակայն պահել եր իր ջա-
հելութեան բոլոր սովորութիւնները, խստորեն հետևում եր յո-
թանասունական թվականների մոդաներին և հագնվում եր նույն-
քան յերկար, նույնքան խնամքով, ինչպես և վաթսուն տարե-
առաջ: Պատուհանի մոտ՝ քարգահի առաջ նստած եր մի որիորդ,
նրա սանուհին:

— Վողջո՛ւյն, Crand maman², — ասաց յերիտասարդ սպան
նեւս մանելով: — Bonjour, mademoiselle Lise. Grand ma-
man³, մի խնդիրք ունեմ ձեզ...

— Ի՞նչ է, Paul⁴:

— Թույլ տվե՛ք ձեզ ներկայացնել իմ բարեկամներից մեկին
և հինգշաբթի որը նրան բերել ձեզ մոտ՝ պարահանդես:

— Բեր նրան ուղիղ պարահանդես՝ ինձ մոտ և այնտեղ ել
կներկայացնես ինձ: Յերեկ դու յեղա՞ր ***-ի մոտ:

— Ի՞նչպես չե. շատ ուրախ անցավ. պարեցինք մինչև ժա-
մի հինգը: Ի՞նչ գեղեցիկն եր Յեկեցկայան:

— Ե՛հ, սիրելիս: Ի՞նչ մի լավ բան կա նրանում: Բնավ
այդպիսին չեր նրա տատը՝ իշխանուհի Դարյա Պետրովնան: Ի
գեպ, յես կարծում եմ, վոր նա արդեն ծերացել է, իշխանուհի
Դարյա Պետրովնան:

— Ի՞նչ, ծերացե՞լ է, — ցրված պատասխանեց Տոմսկին, —
յոթ տարի յե ինչ մեռել է:

Որիորդը գլուխը բարձրացրեց և նշան արեց յերիտասարդին:
Նա հիշեց, վոր պառավ կոմսուհուց թագնում էին նրա հասա-
կակցուհու մահը և կծեց իր շրթունքը: Սակայն կոմսուհին մեծ
աշտարբերութեամբ լսեց իր համար նոր լուրը:

— Մեռե՛լ է, — ասաց նա. — իսկ յես չե՛յի ել իմանում:

¹ Չեպեց — գլխարկ, վոր կրում էին բարձր գատերին պատկանող կա-
նաչք:

² Մեծ մայր, տատ:

³ Բարե՛ ձեզ, որիորդ Լիզա:

⁴ Պոլ՝ (Պավել):

Մենք միասին եյինք Ֆրեյլինի¹ կոչում ստացել և յերբ ներկայացանք թագուհուն, ապա նա...

Յկվ կոմսուհին հարյուրերորդ անգամ թոռին պատմեց իր անեկդոտը:

— Դե՛հ, Paul, —ասաց նա հետո. —հիմա ողնիք ինձ վեր կենամ: Լիզանկա, ո՞ւր ե իմ քթախոտի տուփը:

Յեկվ կոմսուհին իրեն սպասավորող աղջիկների հետ անցավ չիրմայի հետևը՝ իր արդուզարդը ավարտելու: Տոմսկին մնաց որիորդի հետ:

— Ո՞ւմ եք ուզում ներկայացնել կոմսուհուն, —կամացուկ հարցրեց Լիզավետա Իվանովնան:

— Նարումովին: Դուք ճանաչո՞ւմ եք նրան:

— Վոչ: Նա զինվորականն է, թե քաղաքացիական պաշտոնյա...

— Զինվորականն է:

— Ինժեներ՞:

— Վոչ, հեծելակ է: Իսկ դուք ինչո՞ւ եյիք կարծում, վոր նա ինժեներն է: —Որիորդը ծիծաղեց և վոչ մի բառ չարտասանեց:

— Paul, —կանչեց կոմսուհին չիրմայի յետևից, —ինձ մի վորեւե ուման ուղարկիր. միայն, խնդրեմ՝ վոչ այժմյան ումաններէ:

— Ի՞նչպես թե, grand' maman.

— Այսինքն մի այնպիսի ուման, վորի մեջ հերոսը չի խեղդում վոչ հորը, վոչ մորը և մեջը չլինեն ջրահեղձ մարդիկ: Յեւ սաստիկ վախենում եմ ջրահեղձներից:

— Հիմա չկան այդպիսի ումաններ: Մի՞թե չեք ուզում ուսերեն ումաններ:

— Մի՞թե ուսերեն ումաններ կան... Ուղարկիր, սիրելիս, խնդրում եմ, ուղարկիր:

— Ներեցեք, grand' maman, յես շտապում եմ... ներեցեք:

¹ Ֆրեյլինա — սովորաբար բարձր ազնվական դասից սերված պալատական աղջկա կոչում, վորը տրվում էր, յերբ նրանց ընդունում էին թագավորական ընտանիքի՝ բացառապես կանանց (թագուհիներէ, այսպես կոչված «մեծ իշխանուհիներէ») չբախմբի մեջ: Այս յերկի համար Պուշկինը, իր ասելով, նկատի յե ունեցել իշխանուհի Ն. Պ. Գուրչինային (1741—1837), վորը Ֆրեյլինա յե յեղել հինգ թագուհիների որով:

Լիզավետա Իվանովնա: Ինչո՞ւ եյիք կարծում, վոր Նարումովը ինժեներն է:

Յեկվ Տոմսկին դուս յեկավ զգեցարանից:

Լիզավետա Իվանովնան մնաց մենակ. նա թողեց ձեռագործը և սկսեց պատուհանից դուրս նայել: Շուտով փողոցի մի կողմում՝ անկյունի տան այն կողմից յերևաց մի յերիտասարդ սպա. կարմրությունը ծածկեց որիորդի այտերը. նա նորից անցավ իր աշխատանքին և գլուխը կախեց ուղիղ հենքի վրա: Այդ ժամանակ ներս մտավ կոմսուհին, հազած — պատրաստ:

— Լիզանկա, հրամայի, —ասաց նա, — կառեթը լծեն դնանք գրոսներու:

Լիզանկան քարզահը թողեց և սկսեց ձեռագործը հավաքել:

— Ի՞նչ է, խլացե՞լ ես, սիրելիս, —բղավեց կոմսուհին: — Հրամայի շուտով կառեթը լծեն:

— Իսկույն, —կամացուկ պատասխանեց որիորդը և վազեց նախասենյակ:

Ներս մտավ ծառան և կոմսուհուն տվեց իշխան Պավել Ալեքսանդրովիչի ուղարկած գրքերը:

— Լա՛վ: Շնորհակալություն հայտնիր, — ասաց կոմսուհին: — Լիզանկա՛, Լիզանկա՛. ո՞ւր ես վազում:

— Հաղնվելու:

— Կհասցնես, սիրելիս: Նստիր այտեղ: Հապա մի բաց արա առաջին հատորը. կարդա բարձր...

Որիորդը գիրքը վերցրեց և կարդաց մի քանի տող:

— Բա՛րձր, —ասաց կոմսուհին: — Ի՞նչ է պատահել քեզ, սիրելիս. ձայնդ կտրվե՞լ է, ինչ է... Կա՛ց. աթոռ մոտեցրու ինձ. ավելի մոտ... դե՛հ:

Լիզավետա Իվանովնան կարդաց նորից յերկու եջ: Կոմսուհին հորանջեց:

— Թող այդ գիրքը, —ասաց նա, — այժ քեզ հիմար բան: Յետ ուղարկիր իշխան Պավելին և հրամայի, վոր շնորհակալություն հայտնեն... Ի՞նչ յեղավ կառեթը...

— Կառեթը պատրաստ է, —ասաց Լիզավետա Իվանովնան, մի հայացք նետելով դեպի փողոց:

— Ինչո՞ւ դու հաղնված չես, — ասաց կոմսուհին, — միշտ պետք է քեզ սպասել: Դա անտանելի յե, սիրելիս:

Լիզան վազեց իր սենյակը: Չանցավ յերկու րոպե՝ կոմսուհին սկսեց զանգահարել վորքան ուժ ուներ: Յերեք աղջիկներ վազեցին մի դռնով, իսկ սենեկապանը՝ մյուսով:

— Այս ինչ բան է, ձեզ կանչել չի լինի, — ասաց նրանց կոմսուհին: — Ասացեք Լիզավետա Իվանովնային, վոր յես սպասում եմ նրան:

Լիզավետա Իվանովնան ներս մտավ կապտոր¹ հագին և փոքրիկ գլխարկ դրած:

— Վերջապես յեկար, սիրելիս, — ասաց կոմսուհին: — Ես ի՞նչ դուք ե: Դա՛ ինչու համար ե... Ո՞ւմ պիտի հրապուրես... Իսկ յեղանակն ի՞նչ տեսակ ե — կարծես քամի յե:

— Բոլորովին վոչ, ձերզ պայծառափայլութուն: Շատ հանդիստ ե, — պատասխանեց սենեկապանը:

— Դուք մի՞շտ առանց մտածելու յեք խոսում: Ողանքը բացեք: Այդպես ել կա. քամի յե, այն ել՝ սառը: Կառնթը մնա: Լիզանկա, մենք չենք դնա. կարիք չկար դուզվել-զարդարվելու:

— Այս ել իմ կյանքը, — մտածեց Լիզավետա Իվանովնան:

Իրոք, Լիզավետա Իվանովնան ամենամանրախոտ արարածն էր: Դառն է ոտարի հացը, ասում է Դանտեն և դժվար են ոտարի տան դռան աստիճանները² և ո՞վ չիմանա ուրիշից կախում ունենալու դառնությունը, յեթե վոչ նշանավոր պառավի խեղճ սանուհին: Կոմսուհի ***-ը, իհարկե չարասիրտ չէր, սակայն քմահաճ էր վորպես շրջապատողներից յերես առած կին, ժլատ էր, սառը յեսամոլությամբ տոգորված, ինչպես և բոլոր ծեր մարդիկ, վորոնք, սիրելի—կշտացել են իրենց կյանքում և խորթ են ներկային: Նա մասնակցում էր բարձր հասարակություն ընդ զատարկարանություններին, քարչ էր դալիս պարահանդեսներում ու նստում էր անկյունում, յերեսը կարմիր չալարով պատած և հին մոդայով հագնված, վորպես պարահանդեսի դահլիճի ալյանդակ ու անհրաժեշտ մի զարդարանք. խոնարհ վող-

¹ Կապտոր—կանացի վերնազգեստ:

² Դանտե Ալիգլերի (1265—1321)—իտալացի մեծ բանաստեղծ: Իր կյանքի վերջին քսան տարին նա անցկացրեց վտարված հայրենի Ֆլորենցիա քաղաքից. ցտարություն մեջ էլ մեռավ: Պուչչինի բերած տողերը կան Դանտեյի դուրսի գործոցի՝ «Աստվածային կատակերգություն» («*la divina commedia*») մեջ («Դրախտ» յերգ 17). «Դառն է լինում ոտարի հացը և դժվար է բարձրանալ ու իջնել ոտարի սանդուխդներով»:

ջուներով, վորպես սահմանված ծիսակատարություն, նրան մոտենում էյին յեկող հյուրերը և հետո ալյես վոչ վոք չէր դբաղվում նրանով: Իր տանը նա ընդունում էր ամբողջ քաղաքի բնակիչներին, պահպանելով խիստ վարվելակարգ և ղեմքով վոչվորի չճանաչելով: Նրա բազմաթիվ սպասավորները ճարպակալելով և ծերանալով նրա նախասենյակում, անում էյին այն, ինչ քեֆները տալիս էր, անընդհատ թալանելով մեռնող պառավին: Լիզավետա Իվանովնան նրա տան նահատակն էր: Նա թեյ էր լըցնում ու հանդիմանություններ ստանում չաքարը չափից ավելի ծախսելու համար. նա բարձր ձայնով սոմաններ էր կարդում և մեղավոր էր հեղինակի բոլոր սխալների համար. նա ուղեկցում էր կոմսուհուն նրա դրոսանքների միջոցին և պատասխանատու յեր վատ յեղանակի ու վատ սալահատակի համար: Ռոճիկ էյին նշանակել, վորը յերբեք լրել չէյին վճարում նրան ու մինչդեռ պահանջում էյին, վոր նա հագնված լինի ինչպես բոլորն էյին հագնվում, այսինքն՝ ինչպես շատ քեթրը: Բարձր հասարակություն մեջ նա ամենախղճուկ դերն էր խաղում: Բոլորը գիտեյին նրան և վոչ—վոք չէր նկատում նրան: Պարահանդեսներին նա պարում էր միայն այն ժամանակ, յերբ պակասում էր vis-a-vis¹, և տիկիները նրան թեանցուկ էյին անում միայն այն ժամանակ, յերբ նրանց պետք էր լինում զղեցարան գնալու՝ իրենց դուքսի այս կամ այն մասը հարդարելու համար: Նա ինքնասեր էր, սուր կերպով զգում էր իր դրությունը և չուրջն էր նայում, — նա անհամբեր սպասում էր իր աղատարարին. սակայն յերիտասարդները, վորոնք իրենց թեթևամիտ սնանկարծություն մեջ հաշվով էյին չարժվում, նրան չէյին արժանացնում իրենց ուշադրությունը, թեպետ Լիզավետա Իվանովնան հարյուր անգամ ղեղեցիկ էր լիտի ու խստասիրտ հարսնացուներից, վորոնց չուրջը նրանք պտույտ էյին դալիս: Քանի՞ քանի՞ անգամ, հուշիկ թողներով տաղտուկ ու փարթամ հյուրասրահ, նա քաշվում էր իր խղճուկ սենյակը լաց լինելու, ուր դրված էյին պատաս-
ած չիրմաները, կամոդ, հայելի և ներկած մահճակալը և ուր աղոտ լույս էր տալիս ղեղին մոմակալին հազցված ճարպամորը:

Մի անգամ, — դա պատահեց այս վիպակի սկզբում նկարա-

¹ Վիզավի—դեմ ու դեմ, դիմացի. այլալ դեպքում հասկացվում է այն դաման, վորը կարելի պարի մեջ կանգնած է տղամարդկանց դեմ, ուրիշ դամաների չարքում:

դրած յերկույնց յերկուս որ հետո և մի շարաթ առաջ այն տեսա-
րանից, վոր նկարագրեցինք,—մի անգամ Լիզավետա Իվանով-
նան պատուհանի առաջ քարզահի մոտ նստած աշխատելիս ինչ-
պես յեղավ նայեց փողոց և տեսավ մի յերկտասարդ ինժեներ,
վորը անշարժ կանգնած աչքերը սեւեռել էր դեպի նրա փոքրիկ
պատուհանը։ Նա խոնարհեց գլուխը և վերստին զբաղվեց իր աշ-
խատանքով։ Հինգ րոպեյից հետո նորից նայեց — յերկտասարդ
սպան կանգնած էր միևնույն տեղում։ Սովորութիւն չունենա-
լով կոքետութիւն անել անցորդ սպաների հետ, նա դադարեց
փողոց նայելուց և մոտ յերկու ժամ կարում էր առանց գլուխը
բարձրացնելու։ Ճաշը բերին։ Նա վեր կացավ, սկսեց հավաքել
իր քարզահը և պատահաբար փողոց նայելով՝ նորից տեսավ
սպային։ Դա բավական ոտարոտի թվաց նրան։ Ճաշից հետո նա
պատուհանին մոտեցավ մի ինչ-վոր անհանգստութեան զգացու-
մով, սակայն սպան այլևս չկար—և նա մոռացավ նրա մասին...

Յերկուս որ հետո կոմսուհու հետ տանից դուրս գալիս նա
նորից տեսավ նրան։ Սպան կանգնած էր հենց դռան մոտ, դեմ-
քը կղբենու¹ մորթուց կարած ոճիքով ծածկած։ Նրա սև աչքերը
փայլում էին գլխարկի տակից։ Լիզավետա Իվանովնան վախե-
ցավ, ինքն ել չիմանալով ինչից և կառեթ նստեց անբացատրե-
լի սրտդողով։

Տուն վերադառնալուն պես նա վազեց դեպի պատուհանը,—
սպան կանգնած էր իր նախկին տեղում, աչքերը իրեն սեւեռած,
նա հեռացավ պատուհանից, հետաքրքրութիւնից տանջվելով և
իր համար միանգամայն նոր զգացումով հուզված։

Այդ ժամանակվանից որ չէր անցնում, վոր յերկտասարդը
վորոշյալ ժամին չհայտնվէր նրանց տան պատուհանների տակ։
Նրա և որիորդի միջև հաստատուեցին չպայմանավորված հարա-
բերութիւններ։ Իր տեղում ձեռադործով զբաղված նա զգում
էր նրա մոտենալը, բարձրացնում էր գլուխը, նայում նրան որ-
որի վրա ավելի յերկար ու յերկար։ Թվում էր, թե յերկտասար-
դը չնորհակալ էր նրանից այդ բանի համար։ Չահելութեան սուր
հայացքով նա տեսնում էր, թե ինչպես կարմրութիւնն արագ
ծածկում է նրա դուռնատ աչտերը ամեն անգամ, յերբ նրանց հա-
յացքները հանդիպում էին միմյանց։ Մի շարաթից աղջիկը
ժպտաց նրան։

Յերբ Տոմսկին թույլալուծիւն խնդրեց կոմսուհուց՝ իր ըն-
կերծը ներկայացնելու, խեղճ աղջկա սիրտը թունդ յեղավ։ Սա-
կայն, իմանալով, վոր Նարումովը ինժեներ չէ, այլ հեծյալ
գվարդիական, նա ախոսաց, վոր անհամեստ հարցով իր դադա-
նիքը հայտնել է թեթեամիտ Տոմսկուն։

Հերմանի հայրը ոռոսացած գերմանացի յեր, վորը նրան թու-
ղել էր մի փոքրիկ դրամագլուխ։ Հաստատ համոզված լինելով իր
անկախութիւնը ամրապնդելու անհրաժեշտութեան մեջ, Հերմա-
նը ձեռք չէր տալիս մինչև իսկ տոկոսներին, ապրում էր սոսի
ոռնիկով, իրեն չթույլատրելով ամենաչնչին փափաքելի բանն
անգամ։ Սակայն նա ծածկամիտ էր ու փառասեր և ընկերները
քիչ դեպքերում կարող էին ծիծաղել նրա ավելորդ խնայողու-
թեան վրա։ Նա զորեղ կրքերի և կրակոտ յերևակայութեան տեր
մարդ էր, սակայն հաստատակամութիւնը փրկեց նրան յերի-
տասարդութեան սովորական մոլորութիւններից։ Այսպես որի-
նակ, հոգով խաղամուլ լինելով՝ նա յերբեք ձեռք թուղթ չէր
ստնում, քանի վոր հաշիվ էր անում, թե իր վիճակը թույլ չի
տալիս (ինչպես ինքն էր ասում) անհրաժեշտ գոհարներով՝ ա-
վելորդ ձեռք բերելու հույսով,— մինչդեռ ամբողջ գիշերներ
նստում էր թղթախաղի սեղանի առջև և տենդային դողով հետե-
վում խաղի տարբեր ընթացքին։

Յերեք խաղաթղթերի մասին պատմած անեկդոտն ուժեղ
ներդործութիւն արավ նրա յերևակայութեան վրա և ամբողջ
գիշեր չհեռացավ նրա մտքից։— Ի՞նչ կլինի, յեթե,— մտածում
էր նա մյուս ուր յերկույնց Պետերբուրգի փողոցներում թափա-
ռելիս,— յեթե պառավ կոմսուհին ինձ բացի իր դադանիքը—կամ
ինձ հայտնի այդ յերեք ճիշտ քարտերը։ Ինչո՞ւ չփորձեմ բախտս։
Ներկայանամ նրան, մի կերպ ձեռք բերեմ նրա վնդորմածու-
թիւնը,— թերևս դառնամ նրա սիրեկանը,— բայց այս բոլորի
համար ժամանակ է պետք—իսկ նա ութսունյոթ տարեկան է,—
նա կարող է մեռնել մի շարաթից,— յերկուս որի՞ց... Հապա
լսածս անեկդոտը... Կարելի՞ է արդյոք հավատ ընծայել
դրան... Վո՛չ։ Հաշիվ, չափավորութիւն և ջանասիրութիւն.
ահա իմ յերեք հավատարիմ քարտերը. ահա թե ի՞նչը կհոռ-
պտուի, կյոթնապատուի իմ կապիտալը և ինձ անդորրութիւն
ու անկախութիւն կտա։—

¹ Бобр—կուղբ, ջրուն։

Այսպես դատելով նա հանկարծ իրեն տեսաւ Պետերբուրգի գլխավոր փողոցներից մեկում, հին ճարտարապետությամբ շինված մի տան առջև։ Փողոցը բռնված էր կառքերով, կառեթները մեկը մյուսի յետևից արագ մոտենում էին մի լուսավորված շքամուտքի։ Կառեթների միջից բոլոր առ բոլոր դուրս եր մեկնելով մերթ ջահել գեղեցկուհու բարեկամ վտար, մերթ շահուն բոտֆորտը¹, մերթ զոլավոր դուլպան ու դիվանագետի կոշիկը։ Պարթևաշուք շվեյցարի մոտով արագ անցնում էին մուշտակներն ու թիկնոցները։ Հերմանը կանգ առավ։

— Սա ո՞ւմ տունն է, — հարցրեց նա անկյունի վոստրիկանա-կան պահակին։

— Կոմսուհի ***-ի, — պատասխանեց պահակը։

Հերմանի սիրտը թռնոք ելավ։ Չարմանալի անեկդոտը նորից հայտնվեց նրա յերեակայության մեջ։ Նա սկսեց քայլել տան մոտերքում, մտածելով տան տիրուհու և նրա հրաշալի ընդունակության մասին։ Ուշ վերադարձավ նա իր համեստ անկյունը. յերկար չէր կարողանում քնել և յերբ քունը տիրեց նրան, աչքին յերեացին թղթեր, կանաչ սեղանը, թղթադրամների կապոցներ և չեթվոցների կույտեր։ Թուղթ թղթի յետևից գնում էր նա, վճռականապես ծալում անկյունները, անդադար տանում էր և վոսկին կխոտում իր առջև ու թղթադրամները դնում դրպանը։ Ուշ արթնանալով նա ասի քաշեց՝ իր յերեակայական հարստության չքանալու համար, նորից գնաց քաղաքում թափառելու և նորից հայտնվեց կոմսուհի ***-ի տան առջև։ Կարծես մի անհայտ ուժ նրան դեպի այդ տունն էր քաշում։ Նա կանգ առավ և սկսեց նայել պատուհաններին։ Մեկում նա տեսավ մի թխահեր փոքրիկ գլուխ, վոր թեքված էր, հալանաբար դրժի կամ աշխատանքի վրա։ Գլուխը բարձրացավ։ Հերմանը տեսավ նրա թարմ գեղեցիկ դեմքն ու սև աչքերը։ Այդ վայրկյանը վճռեց նրա բախտը։

¹ Յերկարավիզ՝ ծնկներից ել վեր կոշիկներ, վոր հագնում էին ղինվորականները։ Շառաշուն-խթաններով։

III

Vous m'écrivez, mon ange,
des lettres de quatre pages, plus
vite que je ne puis les lire.¹

Նամակագրություն

Հազիվ լիզավետա իվանովնան կարողացավ հանել կապտոր և գլխարկը, յերբ կոմսուհին մարդ ուղարկեց նրան կանչելու և հրամայեց նորից դուրս բերել կառեթը։ Նրանք գնացին նստելու։ Հենց այն ժամանակ, յերբ յերկու սպասավորներ պառավին բարձրացրին ու ներս մտցրին կառեթի դռնակների միջով, լիզավետա իվանովնան հենց անիվի մոտը տեսավ իր խեղճներին. վերջինս բռնեց նրա ձեռքը. վախից որիորդն իրեն կորցրեց, յերիտասարդն անհետացավ, նամակը մնաց որիորդի ձեռքում։ Նա այն թագցրեց ձեռնոցի արանքում և ամբողջ ճանապարհին վոչինչ չէր լսում ու տեսնում։ Կոմսուհին սովորություն ուներ կառեթում նստած ժամանակ ամեն բոլոր հարցեր տալ. այդ ո՞վ հանդիպեց մեզ — ի՞նչպես ե կոչվում այս կամուրջը, ի՞նչ ե դրած այնտեղ՝ ցուցանակի վրա։ Լիզավետա իվանովնան այս անգամ տալիս էր անպատեհ պատասխաններ, ինչ վոր լեզվին գալիս էր, և բարկացրեց կոմսուհուն։

— Ի՞նչ յեղավ քեզ, այ աղջիկ։ Ապո՞ւշ ես կտրել, ինչ ե։ Դու կա՞մ չես լսում ինձ, կա՞մ՝ չես հասկանում։ Փառք աստծո, յես թոթովախոս չեմ և խելքս դեռ չեմ կորցրել։

Լիզավետա իվանովնան չէր լսում նրան։ Տուն վերադառնալուն պես նա վաղեց իր սենյակը, ձեռնոցի միջից հանեց նամակը. դա կնքված չէր։ Լիզավետա իվանովնան կարդաց այն։ Նամակը սիրո խոստովանություն էր բովանդակում. գրված էր քնքալից, հարգանքով և բառ առ բառ արտադրված էր գերմանական ռոմանտիկ։ Սակայն լիզավետա իվանովնան գերմաներեն չգիտեր և շատ դժգոհ էր նամակից։

Սակայն իր ընդունած նամակը սաստիկ անհանգստացնում էր նրան։ Առաջին անգամն էր, վոր նա դադարի, սերտ հարաբերության մեջ էր մտնում յերիտասարդ մի տղամարդու հետ։

¹ Դուրք, հրեշտակ, չորս յերեսանոց նամակներ եք գրում ինձ ավելի արագ, քան յես կարողանում եմ կարդալ դրանք։

2 — Ա. Ս. Պուշկին — Պիկովյա դամա



Յերիտասարդի հանդգնութիւնը սարսափեցնում էր նրան: Նա իրեն նախատում էր անդգույշ վարվեցողութեան մեջ և չգիտեր ինչ անել: Ղաղաքը արդէն պատուհանի մոտ նստելուց և անուշադրութեամբ սառեցներ յերիտասարդ սպայի հետադա հետապնդումների փափազը՝ արդէն յետ չուղարկել նրան նամակը — սառն ու կտրուկ չարտասխանել: Ձկար մեկը, վորի հետ նա խորհրդակցեց, նա վո՛չ ընկերուհի ուներ, վո՛չ դաստիարակչուհի: Լիզավետա Իվանովնան վճռեց պատասխանել:

Նա նստեց փոքրիկ գրասեղանի առջև, վերցրեց գրիչը, թուղթը, — և մտածումների մեջ ընկավ: Մի քանի անգամ նա սկսեց նամակը և պայտուց. մեկ՝ արտահայտութիւններն ելին թվում նրան չափից դուրս ներդաշնակ, մեկ անգամ դաժան: Վերջապես նրան հաջողվեց գրել մի քանի տող, վորոնցով նա գոհ մնաց: «Յե՜ս հավատացած եմ, — գրում էր նա, — վոր դուք ազնիվ դիտավորութիւններ ունեք և վոր չեք կամենա ինձ վերաբերել անխոհեմ արարմունքով. բայց մեր ծանոթութիւնը չպետք է սկսվի այս կերպ: Ձեզ եմ վերադարձնում ձեր նամակը և հուսով եմ, վոր այսուհետե պատճառ չեմ ունենա դանդաղ վերաանիւթի անհարգելից վերաբերմունքի համար»:

Մյուս օրը, տեսնելով յեկող Հերմանին, Լիզավետա Իվանովնան վեր կացավ քարդահի առջևից, դուրս յեկավ դահլիճ. բացեց ողանցքը և նամակը փողոց չալրտեց, հույս դնելով յերիտասարդ սպայի ճարպկութեան վրա: Հերմանը վրա վաղից, վերցրեց այն և մտավ հրուշակարանը: Կնիքը պոկելով նա գտավ իր նամակը և Լիզավետա Իվանովնայի պատասխանը: Նա դրան ել սպասում էր և վերադարձավ տուն, սաստիկ տարված իր խորհրդամունքով:

Դրանից յերեք օր հետո մի ջահել արադաշարժ աչքերով մամղել՝ Լիզավետա Իվանովնային մի փոքրիկ գրութիւն բերեց մոզայի կրպակից:

Լիզավետա Իվանովնան անհանգստութեամբ բացեց այն, նախատեսելով դրամական պահանջներ և հանկարծ ճանաչեց Հերմանի ձեռքը:

— Դուք, հոգյակս, սխալվել եք, — ասաց նա. — այս գրութիւնը ինձ չի ուղղված:

— Վոչ, իսկ և իսկ ձեզ, — պատասխանեց համարձակ աղջիկը, չթաղցնելով խորամանկ ժպիտը: — Հաճեցե՞ք կարդալ:

Լիզավետա Իվանովնան արագ աչքի անցրեց գրութիւնը: Հերմանը տեսակցութիւն էր պահանջում:

— Ձի՛ կարող պատահել, — ասաց Լիզավետա Իվանովնան, վախենալով թե՛ պահանջների շտապողականութիւնից և թե՛ նրա գործադրած յեղանակից: — Այս նամակը իրոք վոր ինձ չի ուղղված: — Ու նամակը պատուտեց մանր կտորների:

— Թե վոր նամակը ձերը չէր, հապտ ինչո՞ւ պատուցիք, ասաց մամղելը. — յես կվերադարձնեյի նրան՝ ո՛վ ուղարկել էր այն:

— Խնդրե՛մ, հոգյակս, — ասաց Լիզավետա Իվանովնան, բռնկվելով նրա նկատողութիւնից. — սրանից հետո ինձ նամակներ չբերեք: Իսկ նրան, ով ուղարկել է ձեզ, ասացե՞ք, վոր նա պետք է վոր ամաչի...

Բայց Հերմանը չէր դադարում: Լիզավետա Իվանովնան ամեն օր նրանից նամակներ էր ստանում մերթ այս, մերթ ուրիշ յեղանակով: Դրանք արդեն թարգմանված չեյին գերմաներենից: Հերմանը գրում էր կրքից ներշնչված և խոսում իրեն հատուկ լեզվով. նամակների մեջ արտահայտվում էր թե՛ նրա ցանկութիւնների անդրդիւլիսութիւնը և թե՛ անսանձ յերեւակայութեան շփոթը: Լիզավետա Իվանովնան այլևս չէր մտածում դրանք յետ ուղարկելու. նա արբեւում էր նրանցով. սկսեց պատասխանել. — և նրա նամակները հետզհետե դառնում էին սովորի յերկար ու ավելի քնքույշ: Վերջապես նա պատուհանից հետևյալ նամակը քցեց նրան.

— «Այսօր պարահանդես կա *** — ահա՛ն դեսպանի տանը: Կոմսուհին այնտեղ կլինի: Մենք կմնանք մինչև ժամը յերկուսը: Ահա ձեզ առիթ ինձ միայնակ տեսնելու: Հենց վոր կոմսուհին կմեկնի, նրա մարդիկ, հավանորեն, կցրվեն, օրհնում կմնա միայն չվեցարը, բայց նա ել սովորաբար քաշվում է իր խցիկը: Յեկեք տաներկուսի կիսին: Քայլեցե՞ք ուղիղ դեպի սանդուղքը: Յեթե նախատեսյակում մարդ հանդիպի, այդ դեպքում հարցրե՛ք տա՞նն ե արդէն կոմսուհին: Ձեզ կասեն, վոր՝ վոչ, — ել ճարներդ ինչ: Պետք է վերադառնաք: Բայց հավանաբար դուք վոչ-վորի չեք հանդիպի: Աղջիկները նստած կլինեն իրենց սենյակում, բոլորը միասին: Նախատեսյակից գնացե՞ք ձախ, դի-

մեցեք ուղիղ մինչև կոմսուհու ննջարանը: Ննջարանում շիրմայի յետևում կտեսնեք յերկու փոքրիկ դռնակներ. աջից՝ դեպի կաթիլներ, ուր կոմսուհին յերբեք չի մտնում, ձախից՝ միջանցքը և հենց այդտեղ մի նեղ վոլորուն սանդուխք կա. դա դեպի իմ սենյակին է տանում»:

Հերմանը դողում եր վազրի պես՝ անհամբեր սպասելով նշանակված ժամին: Յերեկոյան ժամի տասին նա արդեն կանգնած եր կոմսուհու տան առջև: Յեղանակը սարսափելի յեր. քամին վռնում եր, թաց ձյունն իջնում եր փաթիլներով. աղոտ լուսավորում եյին լապտերները. փողոցները ամայի եյին: Հազվադեպ՝ վտիտ ձիով լծված մի կառք եր անցնում դանդաղ, և կառապանը նայում եր ուշացած ուղևորին: Հերմանը կանգնած եր՝ հազին մի սյուրտուկ, ու չեր դիմ վո՛չ քամին, վո՛չ ձյունը: Վերջապես յերեաց կոմսուհու կառքի: Հերմանը տեսավ, թե ինչպես լակեյները կոմսուհու թևերն ընկած անից դուրս բերին սամուր քուրքով կոլոված կորամեջք աղ պառավին, և ինչպես նրա յետևից բարակ թիկնոցով, գլուխը թարմ ծաղիկներով զարդարված, արագ կառք մտավ նրա սանուհին: Դռնակները փակվեցին: Կառքի անիվները ծանր թավալվեցին փափուկ ձյունի վրայով: Շվեյցարը փակեց սանդուխքը: Պատուհաններն աղոտացին: Հերմանը սկսեց անց ու դարձ անել ամայացած տան մոտ. նա մոտեցավ լապտերին, նայեց ժամացույցին, — տասնմեկն անց եր քսան րոպե: Նա մնաց լապտերի տակ կանգնած, աչքերը ժամացույցի սլաքին հառած, սպասելով մնացած րոպեների լրանալուն: Զիշտ տասներկուսի կիսին նա վոտ դրեց կոմսուհու տան մուտքը և մտավ պայծառ լուսավորված սրահ: Շվեյցարը այնտեղ չեր: Հերմանը սանդուխքով վաղեց վեր, բացեց նախասենյակի դռները և տեսավ ծառային լամպի տակ հնամենի կեղտոտված թիկնաթուռի մեջ ընած: Թեթև ու հաստատ քայլով Հերմանն անցավ նրա մոտով: Դահլիճն ու հյուրասրահը մութն եյին: Նախասենյակի լամպը աղոտ լույս եր սփռում այնտեղ: Հերմանը մտավ ննջարան: Տապանակի առջև, վորը լի յեր վաղեմի սրբապատկերներով, վառվում եր վոսկյա կանթեղը: Խունացած չտոփի՝ թիկնաթուռներն ու բազմոցները բմբուլե բարձերով՝ վրաններից վոսկեթելը իջած,

1 Շտոֆի — դործվածք:

տխուր համաչափությամբ դրված եյին չինական պատառներով ծածկված պատերի տակ: Պատի վրա կախված եյին յերկու պորտրե, նկարված Փարիզում M-me Lebrun-ի¹ ձեռով: Նրանցից մեկը պատկերում եր քառասուն տարեկան մի տղամարդ, կարմրադեմ ու լիք կաղմված քով, բացկանաչավուն համադրեհատով և կրծքին աստղ. մյուսը՝ մի ջահել գեղեցկուհի, արծաթաքիթ, մազերը քունքերից յետ սանրած ու փոշեցան մազերի մեջ մի վարդ: Բոլոր անկյուններում յերևում եյին հախճապակյա փոքրիկ հովիվներ, ճաշարանի ժամացույցը՝ դործ պանծալի Leroy-ի², ստախիկներ, վոլորակներ, հովահարներ և կանացի դանդան խաղալիքներ, վորոնք հնարված եյին անցյալ դարի վերջին Մոնդոլֆերյան դուդի և Մեամերյան մադնիտիզմի³ հետ միասին: Հերմանն անցավ շիրմայի յետև: Այնտեղ մի փոքրիկ յերկաթյա մահճակալ եր դրված. աջ կողմը դանդաղ եր մի դուռ, վորը տանում եր դեպի կաթիլներ. ձախից — մի ուրիշը՝ դեպի միջանցք: Հերմանը բացեց այն, տեսավ մի նեղ, վոլորուն սանդուխք, վոր խեղճ քանուկու սենյակին եր տանում... Սակայն նա յետ դարձավ և մտավ մութ կաթիլներ:

Ժամանակը դանդաղ եր անցնում: Ամեն ինչ խաղաղ եր: Հյուրասրահում խփեց տասներկու ժամը. բոլոր սենյակներում մեկը մյուսի հետևից ժամացույցները ղրնդոցով խփեցին տասներկուսը, — և ամեն ինչ լուեց նորից: Հերմանը կանգնել եր, սուր վառարանին հենված: Նա հանդիստ եր. նրա սիրտը բաբախում եր հավասար, վորպես սիրտը մի մարդու, վորը վճռել է կատարել մի ինչ-վոր վտանգավոր, սակայն անհրաժեշտ բան: Ժամացույցը խփեց առավոտյան մեկ և յերկու ժամերը — և նա լուեց կառքի հետավոր դղրդոցը: Անսպասելի մի հուզում համակեց նրան: Կառքի մոտեցավ և կանգ առավ: Մարդիկ վա-

1 Յելիզավետա Վիտե — Լեբրեն (1755—1842) — ժամանակի հայտնի դեմանկարչուհի:

2 Լեբուա — անվանի ժամացույց:

3 Մոնդոլֆերյան դուդ — առաջին ողապարիկը դյուտաբարների յեղբ. Մոնդոլֆերյանի անունով: Մեամեր (1733—1815) — գերմ. բժիշկ-հիպնոզիստ, վորը առավ մղեց այսպես կոչված «կենդանական մադնիտիզմի» հիպոթեզը, կենդանի որդանիզմի մեջ հատուկ անկշռի հեղուկի առկայությունը, վոր իր ժամանակ մեծ վեճերի առիթ տվեց և վորը հետագայում ժխտեց գիտությունը:

զեցին, լավեցին ձայներ և տունը լուսավորվեց: Ննջարան վազեցին յերեք ծեր աղախինները, և կոմսուհին, հազիվ կենդանի ներս մտավ ու ընկավ վոլթերյան թիկնաթոռի մեջ: Հերմանը նայում եր դռան ճեղքի միջով. լիզավետա իվանովնան անցավ նրա մոտով. Հերմանը լսեց նրա շտապ քայլերը սանդուխքի աստիճանների վրա: Յերիտասարդի սրտում արձագանք տվեց խղճի խայթի պես մի բան և նորից լռեց: Նա քարացավ:

Կոմսուհին սկսեց հանվել հայելու առջև: Սպասուհիները հանեցին վարդերով զարդարված չամչիկը. վերցրին փոշեծածիկ կեղծամբ նրա սպիտակած ու կարճ խուզած գլխից: Քորոցները անձրևի պես տեղացին նրա շուրջը: Արծաթակար դեղին զգեստն իջավ նրա ուռած վոտների: Հերմանը տեսնում եր նրա հարդարանքի նողկալի դադանիքները. վերջապես կոմսուհին մնաց քնելու կոֆտայով և դիշերային չամչիկով. այդ հաղուստով, վոր ավելի եր հատուկ նրա ծերությանը, նա ավելի քիչ սարսափելի ու ալանդակ եր թվում:

Ինչպես բոլոր ծեր մարդիկ առհասարակ, կոմսուհին տառապում եր անքնությամբ: Հանվելուց հետո նա նստեց պատուհանի մոտ, վոլթերյան թիկնաթոռի մեջ և սպասուհիներին արձակեց: Մոմերը դուրս տարան, սենյակը նորից լուսավորում եր միայն կանթեղը: Կոմսուհին նստել եր ամբողջովին դեղնած, կախ ընկած չրթունքները շարժելով և աջ ու ձախ ճոճվելով: Նրա պղտոր աչքերի մեջ յերևում եր մտքի կատարյալ բացակայություն. նայելով նրան՝ կարելի չեր կարծել, վոր սարսափելի պառավի ճոճումն առաջանում ե վո՛չ թե նրա կամքից, այլ թաղուն Գալվանիզմի ներդրածությունից:

Հանկարծ անբացատրելի կերպով փոխվեց այդ մեռած դեմքը: Շրթունքները դադարեցին շարժվելուց, աչքերը կենդանացան. կոմսուհու առջև կանգնած եր մի անձանիթ տղամարդ:

— Մի՛ վախենաք, է սեր ասածո, մի՛ վախենաք, — ասաց նա լսելի ու հանդարտ ձայնով: — Յես դիտավորություն չունեմ ձեզ վնասելու. յես յեկել եմ ձեզնից մի վողորմածություն խնդրելու:

Պառավը լուռ նայում եր նրան և թվում եր, թե չի լսում:

Հերմանը յենթադրեց, վոր նա խուլ ե և խոնարհվելով նրա ապանքի տակ, կրկնեց միևնույնը: Պառավն առաջվա պես լուռ եր:

— Դուք կարող եք, — շարունակեց Հերմանը, — իմ կյանքը յերջանկացնել և դա չնչին բան ե ձեզ համար. յես դիտեմ, վոր դուք կարող եք յերեք խաղաթուղթ միանգամից դուշակել...

Հերմանը կանգ առավ: Թվում եր, թե կոմսուհին հասկացավ, թե իրենից ի՞նչ են ուզում. թվում եր, թե նա բռներ ե փնտրում իր պատասխանի համար:

— Դա կատակ եր, — ասաց պառավը վերջապես, — յերդ՝ ո՛ւմ եմ ձեզ, դա կատակ եր:

— Դրանով կատակ չեն անի, — բարկացած առարկեց Հերմանը: — Հիշեցեք Չապլիցկուն, վորին դուք ոգնել եք տանուլ տվածը յետ բերելու:

Կոմսուհին ըստ յերևույթին չփոխվեց: Նրա դիմագծերը պատկերում եյին հոգեկան մի ուժեղ աշխատանք, սակայն նա նորից ընկավ նախկին անզգա դրության մեջ:

— Կարո՞ղ եք արդյոք, — շարունակեց Հերմանը, — հայտնել ինձ այդ յերեք ստույգ խաղաթղթերը:

Կոմսուհին լուռ եր. Հերմանը շարունակեց.

— Ո՞ւմ համար պիտի պահեք ձեր դադանիքը: Թոռների՞ համար: Նրանք առանց դրան ել հարուստ են. նրանք ի՞նչ գիտեն դրամի հարգը: Դրամ վատնողին չեն ոգնի ձեր յերեք խաղաթղթերը: Ով չի կարող պահպանել հայրական ժառանգությունը, միևնույն ե, նա չքավորության մեջ կմեռնի, ինչպիսի դիվային փանքեր ել ուղի դործ դնել: Յես վատնիչ չեմ. յես դրամի հարգը գիտեմ: Ձեր յերեք խաղաթղթերը ինձ համար չեն կորչի: Դե՛հ...

Նա կանգ առավ և սրտողողով սպասում եր պատասխանի: Կոմսուհին լուռ եր. Հերմանը ծունկ չոքեց:

— Յեթե յերբեք, — ասաց նա, — ձեր սիրտը սիրո զգացում ե իմացել, յեթե դուք հիշում եք նրա բերկրանքները, յեթե դե՛թ մի անգամ դուք ժպտացել եք նորածին վորդու լացի ժամանակ, յեթե մարդկային վորեք բան յերբեկից թրթռացել ե ձեր կրծքում, ապա թախանձագին խնդրում եմ ամուսնու, սիրուհու, մոր զգացմունքներով, — այն ամենով, ի՞նչ սուրբ ե կյանքում, — մի՛ մերժեք իմ խնդիրը, — հայտնեցեք ինձ ձեր

1 վոլթերյան թիկնաթոռ — ֆր. նշ. փիլիսոփա և պատմաբան վոլթերի (1694—1778) անունով — բարձր թիկունք ունեցող կաշեպատ խոր բաղաթոռ:

գաղտնիքը, — ձեր ինչի՞ն է պետք այն... Մի գուցե դա կապ-
ված է սոսկալի մի հանցանքի հետ, հավիտենական յերանու-
թիյան խորտակման հետ, դիվային մի պայմանադրութեան հետ...
Մտածեցեք. դուք ծեր եք, այլևս չատ չեք ապրելու, — յես
պատրաստ եմ իմ հողու վրա վերցնելու ձեր մեղքը: Միայն թե՛
հայտնեցեք ինձ ձեր գաղտնիքը: Մտածեցեք, վոր մի մարդու
յերջանկութիւնը ձեր ձեռքումն է դառնում, վոր վո՛չ միայն
յես, այլ իմ վորդիները, թոռներն ու ծոռները կորհնեն ձեր հի-
շատակը և վորպէս սրբութիւն կհարգեն...

Պառավր վոչ մի բառով չպատասխանեց:

Հերմանը վեր կացավ:

— Զադո՛ւ պաղաւ, — ասաց նա ատամները սեղմելով, —
վոր այդպէս է, յես կստիպեմ քեզ պատասխանելու...

Այդ խոսքերի հետ նա գրպանից հանեց ատրճանակը:

Ատրճանակը տեսնելուն պէս՝ կոմսուհին յերրորդ անգամ
արտահայտեց ուժեղ ապրումներ. նա դիտով արավ ու ձեռը
բարձրացրեց, ասես կրակոցից պաշտպանվելով... Հետո գլոր-
վեց մեջքի վրա... ու մնաց անշարժ:

— Վե՛րջ տվեք յերեխայութիւններ անելուն, — ասաց Հեր-
մանը, բռնելով նրա ձեռքը: — Վերջին անգամ եմ հարցնում.
ուզո՞ւմ եք ինձ հայտնել ձեր յերեք խաղաթղթերը — այո՛ թե
վոչ:

Կոմսուհին չէր պատասխանում: Հերմանը տեսավ, վոր նա
մեռել է:

IV

7 Mai 18..

Homme sans mœurs et sans religion.¹
Նամակագրութիւն

Լիզավետա Իվանովնան նստած էր իր սենյակում, դեռևս
պարահանդեսի շորերով, ընկղմած խոր մտածմունքների մեջ:
Տուն վերադառնալով նա շտապեց արձակել քնով անցած աղջկան,
վորը դժկամորեն իր ծառայութիւնն էր առաջարկում նրան, —
ասաց, վոր ինքը կհանի շորերը և սրտի թրթռումով մտավ իր

¹ 7 մայիսի 18.. թ.

Մարդ՝ առանց բարոյական և կրօնական հիմքերի:

սենյակը, հուսալով այնտեղ գտնել Հերմանին և ցանկանալով
չգտնել նրան: Առաջին հայացքից նա հավաստիացավ նրա բա-
ցակալութեանը և գոհութիւն հայտնեց ճակատագրին այն
խոչընդոտի համար, վորը խանգարեց նրանց տեսակցութիւնը:
Նա նստեց առանց հանվելու և սկսեց վերհիշել այն բոլոր հան-
գամանքները, վորոնք այդպիսի կարճ միջոցում ու այդքան
հեռու տարան իրեն: Ձեր անցել յերեք չաբաթ այն օրից, յերե-
նա առաջին անգամ պատուհանից տեսավ յերիտասարդին և ար-
դեն նամակագրութեան մեջ էր նրա հետ, — և սա կարողացավ դի-
չերային տեսակցութիւն պահանջել իրենից: Գիտեի նրա անունը
միայն այն պատճառով, վոր նամակներից մի քանիսը նա ստո-
րագրել էր. յերեք չէր խոսել հետը, չէր լսել նրա ձայնը, յեր-
բեք չէր լսել նրա մասին... մինչև այսօր յերեկո: Տարորինակ
բան: Հենց այդ յերեկո, պարահանդեսում, Տոմսկին նեղացած
ջահել իշխանուհի Պոլինա ***-ից, վորը սովորականի հակա-
ռակ, կոքետութիւն էր անում վոչ իր հետ, — ցանկացավ քենը
հանել, անտարբերութիւն ցույց տալով նրան. նա հրավիրեց
Լիզավետա Իվանովնային և նրա հետ անվերջ մազուրկա պա-
րեց: Բոլոր ժամանակ նա կատակում էր ինժեներական սպա-
ների նկատմամբ նրա ունեցած աչառութեան համար, հավա-
տացնում էր, վոր ինքը շատ ավելի գիտէ, քան նա կարող է
յենթադրել և նրա կատակներից մի քանիսը այնպէս հաջող ելին
ուղղված, վոր Լիզավետա Իվանովնան մի քանի անգամ մտա-
ծեց, թե իր գաղտնիքը նրան հայտնի է:

— Ո՞ւմնից եք իմացել այդ բոլորը, — հարցրեց նա ծիծա-
ղելով:

— Ձեզ հայտնի անձնավորութեան մտերմից, — պատաս-
խանեց Տոմսկին, — մի շատ հետաքրքիր մարդուց:

— Իսկ ո՞վ է այդ հետաքրքիր մարդը:

— Նրա անունը Հերման է:

Լիզավետա Իվանովնան վոչինչ չպատասխանեց, բայց նրա
ձեռներն ու վրտները սառույց կտրեցին:

— Այդ Հերմանը, — չարունակեց Տոմսկին, — իսկական
ոռմանտիկ անձնավորութիւն է. նա Նապոլեոնի պրոֆիլ ունի,
Մեֆիստոֆելի հոգի: Յես կարծում եմ, վոր նրա խղճի վրա
ծանրացած է առնվազը յերեք չարագործութիւն: Ի՞նչպէս
դուք գունատվեցիք...

— Գլուխս ցավում ե... Ի՞նչ եր ձեզ ասում Հերմանը,—
 Կամ՝ ի՞նչպես եր նրա անունը...

— Հերմանը չատ անբավական ե իր բարեկամից. նա ասում
 է, վոր նրա տեղ ինքը միանգամայն այլ կերպ կվարվեր... Յես
 մինչև իսկ յենթադրում եմ, վոր Հերմանը ինքը դիտավորու-
 թյուններ ունի ձեր նկատմամբ, համեմայն դեպս նա բնավ ան-
 տարբեր չի լսում իր բարեկամի սիրահարական բացականչու-
 թյունները:

— Բայց վո՞րտեղ ե նա տեսել ինձ:

— Յեկեղեցում, կարելի չե,— դոստանքի ժամանակ...
 աստված գիտե նրան. կարելի չե՝ ձեր սենյակում, ձեր քնած
 ժամանակ. նրանից սպասելի չե...

Նրանց մոտեցող յփրեք տիկիներ — *oubli ou regret?*¹
 հարցով ընդհատեցին խոսակցությունը, վորը տանջալից հետա-
 քրքրական եր դառնում Լիզավետա Իվանովնայի համար:

Տոմսկու ընտրած տիկինը ինքը իշխանուհի *** եր: Վեր-
 ջինս ժամանակ ունեցավ նրա հետ բացատրվելու, մի ավելորդ
 շրջան պատվելով և ավելորդ անգամ չուռ դալով իր արժու-
 քը: — Վերադառնալով իր տեղը Տոմսկին այլևս չեք մտածում
 վոչ Հերմանի, վոչ Լիզավետա Իվանովնայի մասին, վորը ան-
 պայման ուզում եր վերսկսել ընդհատված խոսակցությունը,
 սակայն յերաժշտությունը դադարեց և չուտով դրանից հետո
 ծեր կոմսուհին մեկնեց:

Տոմսկու խոսքերը վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ մագուր-
 կային շաղակրատանք, բայց դրանք խորն ընկան ջահել յերազո-
 դուհու հոգու մեջ: Տոմսկու ուրվագծված պորտրեն նմանում եր
 աֆն պատկերին, վոր կազմել եր ինքը և, չնորհիվ նորագույն
 ուսմանների, այդ՝ այլևս գոհնիկ անձնավորությունը վախեց-
 նում և դերում եր նրա յերևակայությունը: Նա նստած եր,
 մերկ ձեռները ծալած, դեռևս ծաղիկներով զարդարված գլու-
 խը բաց կրծքին խոնարհած... Հանկարծ դուռը բացվեց, և ներս
 մտավ Հերմանը: Նրա դուռը բռնեց:

— Ո՞ւր եյիք դուք,— հարցրեց Լիզավետա Իվանովնան
 վախեցած չուկով:

— Եր կոմսուհու նեղարանում,— պատասխանեց Հերմա-
 նը,— յես հիմա դուրս յեկա այնտեղից: Կոմսուհին մեռավ:

— Աստված իմ... Ի՞նչ եք ասում...

— Յեվ կարծեմ,— չարունակեց Հերմանը,— յես եմ նրա
 մահվան պատճառը:

Լիզավետա Իվանովնան նայեց նրան և՝ Տոմսկու խոսքերը
 հնչեցին նրա հոգում. այդ մարդու խղճի վրա ծանրացած է
 անկապը յերեք չարագործություն: Հերմանը նստեց նրա մոտ՝
 պատուհանի դռքին և ամեն ինչ պատմեց:

Լիզավետա Իվանովնան սարսափով լսեց նրան: Յեվ ու-
 բեմն, այդ կրքոտ նամակները, այդ բուռն պահանջները, այդ
 հանդուգն, համառ հետապնդումը, այդ բոլորը սե՛ր չեք:
 Դրամ,— ահա թե ինչ եր տենչում նրա հոգին: Ինքը չե, վոր
 պիտի՝ կարողանար հագեցնել նրա ցանկությունները և յերջան-
 կացնել նրան: Թշվառ սամուհին վոչ այլ ինչ եր, յեթե վոչ
 ավազակի՝ իր ծեր բարերարուհուն սպանողի կույր ոգնականը...
 Դառն արտասովեց նա իր ուշացած, ցավազին զղջման մեջ: Հեր-
 մանը նայում եր նրան՝ լուռ. նրա սիրտը նույնպես մորմոք-
 վում եր, սակայն վո՛չ թշվառ աղջկա արցունքները, վո՛չ նրա
 վշտի զարմանալի հրապույրը չվրդովեցին նրա դաժան հոգին:
 Մեռած ծեր կնոջ մասին մտածելիս նա խղճի խայթ չեք զգում:
 Մի բան եր սարսափեցնում նրան. անդարձ կորուստը գաղանի-
 քի, վորից նա հարստացում եր սպասում:

— Դուք հրե՛չ եք,— վերջապես առաց Լիզավետա Իվանով-
 նան:

— Յես նրա մահը չեյի ցանկանում,— պատասխանեց Հեր-
 մանը,— իմ ատրճանակը լցված չի:

Նրանք լռեցին:

Առավոտը բացվում եր: Լիզավետա Իվանովնան հանդերեց
 ամբողջովին այլովող մոմը. գունատ շողերը լուսավորեցին նրա
 սենյակը: Նա սրբեց արտասովակեղ աչքերը և նայեց Հերմանին.
 նա նստած եր պատուհանի դռքին, ձեռքերը ծալած և դեմքը
 ահարկու խոժոռած: Այդ դիրքում նա զարմանալի կերպով հի-
 չեցնում եր Նապոլեոնի պորտրեն: Այդ նմանությունն ապշե-
 ցրեց մինչև իսկ Լիզավետա Իվանովնային:

¹ «Մոռացում թե՛ արհեստանք»: Կարելի խաղալիս տղամարդը իր դաժա-
 յին պետք ե ընտրել պարին մասնակցողներին մեկից, վորոնք վորեւ պայմա-
 նավան բառով եյին կոչում իրենց:

— Ի՞նչպես պիտի դուրս գաք տնից, — ասաց վերջապես իրզավետա իվանովնան։ — Յես մտածում եյի ձեզ տանել գաղտնի սանդուխքով, բայց դրա համար պետք է դնալ ննջարանի մոտով, իսկ յես՝ վախենում եմ։

— Ասացե՛ք ինձ, թե ինչպես պետք է դնել այդ գաղտնի սանդուխքը. յես դուրս կգամ։

Իրզավետա իվանովնան վեր կացավ, կամոդից հանեց բանալին, տվեց Հերմանին և մանրամասն ցուցմունքներ տվեց նրան։ Հերմանը սեղմեց նրա սառը, անպատասխան ձեռը, համբուրեց նրա խոնարհած գլուխը և դուրս յեկավ։

Նա իջավ վոլոդրոն սանդուխքով և նորից մտավ կոմսուհու ննջարանը։ Մեռած պառավը նստած էր քարացած. նրա դեմքը խորին անդորրություն էր արտահայտում։ Հերմանը կանգ առավ նրա առջև, յերկար նայեց նրան, կարծես թե ցանկանալով հավատարմանալ սարսափելի իսկությանը. վերջապես մտավ կարիներ, պատառի տակ շոշափեց դուռը և սկսեց իջնել մութ սանդուխքով, հուզված ոտարոտի զգացումներով։ Այդ նույն սանդուխքով, մտածում էր նա, մի դուռք վաթսուն տարի առաջ հենց նույն ննջարանը, նույն այս ժամին, նոր կարած կաֆտանը՝ հագին, a l'oiseau royal² սանրված, սրտին սեղմած էր յեռանկյունի գլխարկը, գաղտնաբերված անցնում էր յերիտասարդ յերջանիկը, վորը վաղուց փտել է գերեզմանում, իսկ նրա դառմալ սիրուհու սիրտը այսօր դադարեց բաբախելուց...

Սանդուխքի տակ Հերմանը մի դուռ գտավ, վորը բացեց նույն բանալիով և անսպասելի կերպով հայտնվեց միջանցքում. վորը իրեն փողոց դուրս բերեց։

1 կաֆտան — տղամարդու վերնազգեստ լայն փեշերով։

2 «կուռնիկի պես» — հին ձևի սանրվածք։

V

Այդ գիշեր ինձ հայտնվեց հանգուցյալ բարոնուհի Ֆոն-Վ...։ Նա ամբողջովին սպիտակ շորերով էր և ասաց ինձ. «Բարե՛ ձեզ, պարոն խորհրդական»։

Շվեդենբուրգ¹

Ճակատագրական գիշերից յերեք օր հետո, առավոտյան ժամի իննին Հերմանը ճանապարհ ընկավ դեպի այն վանքը, ուր պետք է կատարեյին ննջեցյալ կոմսուհու թաղման կարգը։ Զրդջում չզգալով, նա այնուամենայնիվ չկարողացավ բոլորովին խրացնել իր խղճի ձայնը, վոր անդադար ասում էր նրան. դո՛ւ ես պառավին սպանողը։ Ծշմարիտ հավատ քիչ ունենալով հանդերձ՝ նա ունեւ բազմաթիւ նախապաշարմունքներ։ Նա հավատում էր, վոր մեռած կոմսուհին կարող է վատ ազդեցություն ունենալ իր կյանքի վրա, — և վճռեց ներկա լինել նրա թաղմանը, վորպեսզի նրանից ներումն հայցի։

Յեկեղեցին լի յեր մարդկանցով։ Հերմանը հաղիվ-հաղ կարողացավ ճանապարհ բանալ խռոված ժողովրդի միջով։ Դադարը դրված էր ճոխ կատաֆալկի² վրա, թավջառ բալզախինի տակ։ Ննջեցյալը պառկած էր նրա մեջ, ձեռքերը կրծքին ծալած, հաշիադործ չամչիկը գլխին և սպիտակ ատլասե զգեստով։ Շուրջը կանգնած եյին նրա տան մարդիկ. ծառաները սև կաֆտաններով, տոհմանիչով ժապավեններն ուսերին և ձեռքերին մոմեր բռնած. ազգականները խորին սգի զգեստներով. — վորդիները, թոռները, թոռորդիները։ Վոչ վոք չէր լալիս. արցունքները une affectation³ կլինեյին։ Կոմսուհին այնպես ծեր էր, վոր նրա մահը վոչ-վոքի չէր կարող վիշտ պատճառել և վոր նրա ազգականները վաղուց նրան նայում եյին վորպես իր դարն ապրած մի մարդու։ Զահել յեպիսկոպոսը դամբանական խոսք ասաց։ Պարզ և հուզիչ արտահայտություններով նա ներկայացրեց խա-

1 Սվեդենբուրգ (1688—1772) — չվեդ միստիկ-գրող, վորի յերկասիրությունները «վոդիների» մասին մեծ ժողովրդականություն ունեյին XVIII դարի վերջում և XIX-ի սկզբում։

2 Դիսսեդան, վոր դրվում է վերեից և մասամբ կողքերից վարագուրած բալզախինի՝ ամպհովանու տակ։

3 Զևացում։

դադ վերափոխումը աստվածավարն կնոջ, վորի յերկար տարիները անդորր սրտահուլ յախապատրաստություն եյին քրիստոնեական վարձանի համար: «Մահվան հրեշտակը տարավ նրան, — ասաց հոգեփորձը, — վոր արթուն եր, լի բարի մտադրություններով և ի սպասումն կես-գիշերային փեսացուին»¹: Արարողությունն ավարտվեց տխուր պաշտամանով: Աղբակները և առաջինները մոտեցան մարմինն հրաժեշտ տալու: Հետո շարժվեցին նաև բաղնիքով հյուրերը, վորոնք յեկել էին գլուխ խոնարհելու նրան, վորը այնքան վաղուց մասնակից եր իրենց ունայն ուրախություններին: Նրանցից հետո և բոլոր տները: Վերջապես մոտ յեկավ ննջեցյալի հասակակից, նրա պառավ տնտեսուհին: Յերկու ջահել որիորդներ թևանցով տանում էին նրան: Նա ույժ չուներ մինչև գետին խոնարհվելու — և միայն նա թափեց մի քանի արցունք, համբուրելով իր տիրուհու սառը ձեռքը: Նրանից հետո Հերմանը վճռեց մոտենալ դադաղին: Նա մինչև գետին գլուխ խոնարհվեց և մի քանի րոպե պառկած եր սառը հատակին, ուր յեղևնու ճյուղեր էին չաղ տված: Վերջապես վեր կացավ՝ դունատ, ինչպես ինքը ննջեցյալը, վորը դրեց կատաֆալի աստիճանի վրա և թեքվեց... Այդ րոպեին նրան թվաց, վոր մեռելը ծաղրաբար հայացք նետեց իր վրա, մի աչքը կկոցելով: Հերմանը, շտապ յետ-յետ դնալով, վորքը սխալ դրեց և մեջքի վրա թրմիաց գետնին: Նրան բարձրացրին: Նույն այդ ժամանակ վանքի գավիթը դուրս բերին ուշաթափ լիզավետա իմանովնային: Այս միջադեպը մի քանի րոպեով վրդովեց մոռյ ծիսակատարության հանդիսավորությունը: Ներկա գտնվողների մեջ բարձրացավ մի խուլ տրտունջ, իսկ նի-հարավուն կամերհերը, ննջեցյալի մոտ աղբակները, չնչաց իր մոտ կանդնած անգլիացու աղանջին, վոր յերիտասարդ սպան կոմսուհու խորթ վորդին է, անգլիացին ի պատասխան սառը բացականչեց. Oh?

Ամբողջ որը Հերմանը սաստիկ հուզված եր: Հեռու մի պանդուխտ ճաշելիս, նա, հակառակ իր սովորության, չատ խմեց, հուսալով խլացնել ներքին հուզմունքը: Սակայն դինին ե'լ ավելի բորբոքեց նրա յերեւակայությունը: Տուն վերադառ-

¹ Կես-գիշերային փեսացու — այլաբանորեն՝ Քրիստոսը (տես ավետարանային առակը «Եղեղեք և հիմար կույսերի» մասին):

նալով, առանց հանվելու, նա ընկավ մահաակալի վրա և խորքեց:

Նա արթնացավ, յերբ արդեն գիշեր եր. լուսինը լուսավորեւ եր նրա սենյակը: Նա նայեց ժամացույցին. յերեքից պակաս եր յառորդ: Քունն անցավ. նա նստեց մահաակալի վրա և մտածում եր ծեր կոմսուհու թաղման մասին:

Այդ ժամանակ մեկը ներս նայեց պատուհանից, — և իսկույն յետ քաշվեց: Հերմանը վոչ մի ուշադրություն չդարձրեց դրան: Մի րոպե հետո նա լսեց, վոր նախասենյակի դուռը բացում են: Հերմանը կարծեց, վոր իր դենչիկը՝ սովորականի պես հարբած տուն է վերադառնում գիշերային դրոսանքից: Բայց նա անձանոթ քայլերի ձայն լսեց. մեկը քայլում եր, տուֆլիները կամացուկ քստքստացնելով: Դուռը բացվեց, ներս մտավ մի կին ճերմակ շորերով: Հերմանը նրան իր ծեր ստնտուխ տեղ դրեց և դարձացավ, թե ի՞նչը կարող եր նրան բերել այդ ժամին: Սակայն, ճերմակ կինը, սահելով հանկարծ հայտնվեց նրա առջև, — և Հերմանը ճանաչեց կոմսուհուն:

— Յես քեզ մոտ յեկա հակառակ իմ կամքի, — ասաց նա հաստատուն ձայնով, — բայց ինձ հրամայված է կատարել քո խնդիրը: Յերեքնոցը, յոթնոցը և մեկնոցը կտանեն քեզ համար իրար յետևից, — սակայն, այն պայմանով, վոր որ ու գիշերվա մեջ մի խաղաղթից ավելի չդնես և վոր հետո ամբողջ կյանքումդ այլևս չխաղաս: Քեզ ներում եմ իմ մահը այն պայմանով, վոր դու ամուսնանաս իմ սանուհի Լիզավետա իմանովնային հետ...

Այդ խոսքից հետո նա կամացուկ շուտ յեկավ, գնաց դեպի դռները և անհետացավ, տուֆլիները քստքստացնելով: Հերմանը լսեց, թե ինչպես նա աղմուկով վրա դրեց սրահի դուռը և տեսավ, վոր մեկը նորից ներս նայեց իր պատուհանից:

Յերկար ժամանակ Հերմանը չեր կարողանում սթափվել: Նա դուրս յեկավ մյուս սենյակը: Դենչիկը քնած եր հատակի վրա: Հերմանը զորով արթեցրեց նրան: Դենչիկը սովորականի պես հարբած եր. նրանից վոչ մի բան չեր կարելի իմանալ: Սրահի դուռը փակած եր: Հերմանը վերադարձավ իր սենյակը, մոմը վառեց և դրի առավ իր տեսիլը:

¹ Սպալական սպասավոր-գինվոր, սպասյակ:

— Ага нде!¹

— Ինչպէս դուք համարձակվեցիք ինձ աга нде ասել:

— Ձերդ գերազանցութիւն, յետ ասացի ага нде—с!²:

Յերկու անշարժ գաղափարներ չեն կարող միասին գոյութիւն ունենալ բարոյական բնութիւն մեջ այնպէս, ինչպէս յերկու մարմիններ չեն կարող Փիղիքական աշխարհում միեւնոյն տեղը բռնել: Յերեքնոց, յոթնոց, մեկնոց — շուտով մթազնեցին մեռած պառավի պատկերը: Յերեքնոց, յոթնոց, մեկնոց — դուրս չեյին գալիս նրա մտքից և շարունակ հնչում էին նրա շրթներէնների վրա: Զահել մի աղջիկ տեսնելիս նա ասում էր. «Ի՛նչ բարեկազմն ե... Իսկական բաղամի յերեքնոց»: Նրան հարցնում էին. «Վո՛ր ժամն ե», նա պատասխանում էր. «յոթնոցից պակաս ե հինգ րոպե»:— Ամեն մի հաստափոր տղամարդ նրան հիշեցնում էր մեկնոցը: Յերեքնոց, յոթնոց, մեկնոց — հետաքննում էին նրան քնի մեջ, ամեն տեսակ ձևեր ընդունելով: Յերեքնոցը նրա առջև ծաղկում էր փարթամ գրանդի-ֆլորի՝ ձևով, յոթնոցը պատկերանում էր գոթական դռների պէս, մեկնոցը՝ վորպէս վիթխարի մի սարդ: Նրա բոլոր մտքերը կենտրոնացան մի նպատակի վրա — ոգտվել իրեն թանգ նստած գաղտնիքից: Նա սկսեց մտածել պաշտոնը թողնելու և ճանապարհորդութիւն մասին: Նա ուզում էր Փարիզի բաց խաղատներում գանձ կորդել կախարդված բախտից: Մի դէպք նրան փրկեց գլխացավանքից:

Մոտիվայում կազմվեց հարուստ խաղացողների մի ընկերութիւն, հռչակավոր Չեկալինսկու նախագահութեամբ, վորն իր ամբողջ կյանքը անց էր կացրել խաղաթղթերի մեջ և յերբեմն միլիոններ էր դնել, մուրհակներ տանելով և զուտ դրամ տա-

¹ Ատանդէ — Ֆր. attendez բառի աղճատված ձևն է սպասեցի՛ք՝ թղթախաղի ժամանակ նշանակում է առաջարկութիւն, վոր խաղացողը դու՛մար չդնի:

² Հին Ռուսաստանում այսպէս կոչված աշխարհիկ հասարակութիւն մեջ խոսակցութեան ժամանակ «С» հնչյունի հաջորդութեամբ բառավերջում (առաջացել է сударь — տեր, պարոն, աղա կոչականի կրճատումով, սկզբներում դնում էին և «су») արտահայտում էր շեշտված հարգանք, մեծ մասամբ՝ ստորաբար:

³ Մեծ ծաղիկներ ունեցող բույս:

նույն տալով: Յերկարամյա փորձով նա վստահեց իր ընկերներէրի վստահութիւնը, իսկ նրա հյուրընկալ տունը, շնորհալի խոհարարը, սիրալիրութեան ու խնդութիւնը ձեռք բերին հասարակութեան հարգանքը: Նա յեկավ Պետերբուրգ: Յերիտասարդութիւնը հեղեղի պէս թափվեց նրա տունը, ի սեր խաղաթղթերի մոռանալով պարահանդեսները և գերադասելով փարավոնախաղի գայթակղութիւնները կնամոլութեան հրապույրներէն: Նարումովը Հերմանին տարավ նրա մոտ:

Նրանք անցան մի շարք հոյակապ սենյակներ, լի բարեկիրթ սպասավորներով: Մի քանի գեներալներ և գաղտնի խորհրդականներ վիստ՝ էյին խաղում. յերիտասարդները նստել էին, շտոֆյա բազմոցների վրա թեք ընկած, պաղպաղակ էյին ուտում և քաշում իրենց ծխամորճերը: Հյուրատանը, յերկար սեղանի շուրջը, վորի մոտ խաղացողներ էյին խռնված, նստած էր տանտերը և բանկ էր բռնել: Նա վաթսուռ տարեկան մարդ էր ամենապատկառելի արտաքինով. գլուխը պտտած էր արծաթե ճերմակ մագերով. լի և թարմ դեմքը բարեսրտութիւն էր արտահայտում. աչքերը փայլում էին մշտական ժպտով աշխուժացած: Նարումովը Հերմանին ներկայացրեց նրան: Չեկալինսկին բարեկամաբար սեղմեց նրա ձեռքը, խնդրեց նրան ազատ զգալ իր տանը և շարունակեց խաղը:

Տալիան յերկար տեւեց: Սեղանի վրա դրված էր ավելի քան յերեսուն խաղաթուղթ: Ամեն թուղթ բաժանելուց հետո Չեկալինսկին կանգ էր առնում, վորպէսդի խաղացողներին ժամանակ տա իրենց կարգադրութիւններն անելու, գրանցում էր տանուլ տվածը, քաղաքավարութեամբ և ուշադիր լսում էր նրանց պահանջները, ավելի քաղաքավարի հարթում էր անուշադիր ձեռքով ծալած ավելորդ անկյունները: Վերջապէս տալիսն ավարտվեց: Չեկալինսկին թղթերը խառնեց և պտտաւտվեց նոր խաղի համար բաժանելու:

— Թույլ տվե՛ք թուղթ դնել, — ասաց Հերմանը, ձեռքը յերկարելով մի հաստամարմին պարոնի յետևից, վոր հենց այդ ժամանակ խաղաց բանկ բռնողի դեմ: Չեկալինսկին ժպտաց և գլխով արեց, լուռ, վորպէս խոնարհ համաձայնութեան նշան: Նարումովը ծիծաղելով շնորհավորեց Հերմանին՝ յերկարատե պասը լուծելու առիթով և բախտավոր սկիզբ ցանկացավ նրան:

¹ Վիստ — թղթախաղի մի տեսակը:

— Յես գնացի, — ասաց Հերմանը, կալիճով խաղաղումար մաղաղդեղով իր թղթի վերևում:

— Վո՞րքան, — հարցրեց բանկ բռնողը, — ներեցե՞ք, յես լավ չեմ ջոկում:

— Քառասունյոթ հազար, — պատասխանեց Հերմանը:

Այդ խոսքերի հետ բոլոր գլուխները շրջվեցին և բոլորն իրենց աչքերը սևեռեցին Հերմանի յերեսին: — Խեղճ թոցրե՛ց, — մտածեց Նարումովը:

— Թույլ տվե՞ք նկատել, — ասաց Չեկալինսկին իր անսիրտ ժպիտով, — վոր ձեր խաղը ուժեղ է. դեռ վոչ-վոք մի թղթի վրա յերկու հարյուր յոթանասուն հինգից ավելի չի դրել:

— Ի՞նչ անենք վոր, — առարկեց Հերմանը. — խի՞տե՞մ եք իմ թուղթը թե վոչ¹:

Չեկալինսկին գլուխ տվեց նույն խոնարհ համաձայնությամբ:

— Յես միայն ուզում եյի ձեզ հայտնել, — ասաց նա, — վոր ընկերներիս վստահությանն արժանացած լինելով, յես չեմ կարող բանկ բռնել վոչ այլ կերպ, քան յեթե դուտ դրամով: Իմ կողմից յես, իհարկե, հավատացած եմ, վոր բավական է ձեր խոսքը, սակայն խաղի կարգի և հաշիվների համար ինդրեմ դրամը դնե՞ք թղթի վրա:

Հերմանը գրպանից հանեց բանկային տոմսը և տվեց Չեկալինսկուն, վորը թեթև դնելով այն, դրեց Հերմանի թղթի վրա:

Նա սկսեց բաժանել թուղթը. աջ կողմն ընկավ իննոցը, ձախում՝ յերեքնոցը:

— Տարա՛, — ասաց Հերմանը, ցույց տալով իր խաղաթուղթը:

Խաղացողների միջև շուտով բարձրացավ: Չեկալինսկին դեմքը խոժոռեց, սակայն ժպիտն իսկույն ևեթ վերականգնեցավ նրա դեմքին:

— Կհաճե՞ք ստանալ, — հարցրեց նա Հերմանին:

— Շնորհք արե՛ք:

Չեկալինսկին գրպանից հանեց մի քանի բանկային տոմսեր և իսկույն ևեթ հատուցեց: Հերմանն ստացավ իր դրամը և հեռացավ սեղանից: Նարումովը չձմել եր: Հերմանը մի բաժակ լի մոնաղ խմեց և ուղևորվեց տուն:

¹ Այսինքն՝ համաձայն եք խաղալ իմ դրամը դումարի դեմ, թե վոչ:

Մյուս որը յերեկոյան նա նորից հայտնվեց Չեկալինսկու մոտ: Տանտերը բաժանում եր: Հերմանը մոտեցավ սեղանին: Խաղացողներն իսկույն տեղ տվին նրան: Չեկալինսկին սիրալիր գլուխ տվեց նրան:

Հերմանն սպասեց մինչև նոր տալիս, թուղթ դրեց, նրա վրա վեր գալով իր քառասունյոթ հազարը և յերեկվա տարածը: Չեկալինսկին սկսեց բաժանել. վալետն ընկավ աջ, յոթնոցը՝ ձախ:

Հերմանը բացեց յոթնոցը:

Բոլորը ախ քաջեցին: Չեկալինսկին ըստ յերևույթին չփոփվեց: Նա հաշվեց իննսունչորս հազար և տվեց Հերմանին: Հերմանը սառնասրտությամբ ընդունեց դրամը և հենց նույն բոլեյին հեռացավ:

Հաջորդ յերեկո Հերմանը նորից հայտնվեց սեղանի մոտ: Բոլորն սպասում էյին նրան: Գնեերալները և դադանի խորհրդականները¹ թողին իրենց վիստը, վորպեսզի տեսնեն այդքան անսովոր մի խաղ: Յերթասարդ սպաները վեր թռան բաղձոցներին. բոլոր սպասավորները հավաքվեցին հյուրասրահում: Բոլորը շրջապատեցին Հերմանին: Մյուս խաղացողները չդրին իրենց թղթերը, անհամբերությամբ սպասելով, թե նա ինչով կվերջացնի: Հերմանը կանգնած եր սեղանի մոտ, պատրաստվելով մենակ խաղալ գունատ, սակայն դարձյալ ժպտացող Չեկալինսկու դեմ: Նրանցից յուրաքանչյուրը մի-մի կապուկ թուղթ բացեց: Չեկալինսկին բաժանում եր: Հերմանը հանեց և դրեց իր թուղթը, ծածկելով այն մի պատատ բանկային տոմսերով: Դա նման եր մենամարտի:

Չեկալինսկին սկսեց բաժանել. նրա ձեռները դողում էյին: Աջ կողմում ընկավ աղջիկը, ձախում՝ մեկնոցը²:

— Մեկնոցը տարա՛վ, — ասաց Հերմանը և բացեց իր թուղթը:

¹ Тайный советник — քաղաքացիական աստիճաններից մեկը հին Ռուսաստանում:

² Չեկալինսկին Հերմանի հետ շոտոս է խաղում — ազարտ խաղ, վորի կանոններով խաղացողներից մեկը թղթերի կաղով միջև ընտրում է (ցույց չտալով խաղաբանի բռնողին) մի թուղթ, վորի վրա և վեր է դալիս վորոշ գումար. բանկ-բռնողն սկսում է բաժանել մի ուրիշ կալուղից, թղթերը յերկու կողմ դնելով. յեթե ընտրված թղթին համապատասխանողը ընկնում է աջ, ապա տանում է բանկ-բռնողը, ձախ՝ խաղեկը (սոնտյոցը):

— Ձեր աղջիկը զարկւած է, — փաղաքշահնքով ասաց Չեկալինսկին:

Հերմանը ցնցւեց. իրոք, մեկնոցի տեղ նրա առջև ընկած էր սևի աղջիկը: Նա չէր հավատում, հՀասկանալով թե ինքը ինչպէս կարող էր ուրիշ թուղթ վերցնել:

Այդ բոպէյին նրան թվաց, վոր սևի աղջիկը աչքը կկոցեց և քմծիծաղ տվեց: Արտասովոր նմանությունն ապշեցրեց նրան...

— Պառա՛վը, — դռուց նա սարսափած:

Չեկալինսկին իրեն քաշեց տարված տոմսերը: Հերմանը կանգնած էր անշարժ: Յերբ նա սեղանից հեռացավ, աղմկոտ խոսակցություն սկսվեց: — Հիանալի՛ խաղաց, — ասում էին խաղացողները: — Չեկալինսկին նորից խառնեց թղթերը. խաղը շարունակվեց իր կարգով:

ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հերմանը խելագարվեց: Նա նստած է Որուխովյան հիվանդանոցում՝ 17-րդ համարում, վոչ մի հարցի չի օղատասխանում և արտասովոր արագ քրթմնջում է. — Յերեքնո՛ց, յոթնո՛ց, մեկնո՛ց: Յերեքնո՛ց, յոթնո՛ց, աղջի՛կ...

Լիզավետա Իվանովնան ամուսնացավ մի շատ օխրալիւր յերիտասարդի հետ, վոր ինչ-վոր տեղ ծառայում է և բախական կարողություն ունի. նա ծեր կոմսուհու նախկին կառավարչի վորդին է: Լիզավետայի մոտ դաստիարակվում է նրա աղքատ ազգականուհին:

Տոմսկին ոտամխտորի¹ աստիճան է ստացել և ամուսնանում է իշխանուհի Պոլինայի հետ:

1834



¹ Ռոտիստոր — հեծելապա:

Պատ. խմբագիր՝ Ստ. Զարյան

Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան

Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Գլավլիտի լիազոր Կ—4493 հրատ. 3992, պատվեր 362,
Տիրաժ 4000

Պետհրատի տպարան, Յերևան, II Կոմունյանցի, № 4



ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

А. С. ПУШКИН
ПИКОВАЯ ДАМА
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.

ՀՀ Ազգային գրադարան



NL0303997

